

ՔԻՒՐԴ ՑԵՂԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Հին կազմութեան մը վրայ լուսաբանութիւններ՝ որոնք բեւե
իրենց արտօրինակ ձեւերուն մեջ, բայց լոյս կը սփռեն Հայ
ողովութեան հետ ունեցած ցեղակցութեանը վրայ)։

Քիւրդ ցեղերը բացի իրենց հողային աշխարհագրական
բաժանումներէ, հայերն ալ հետն առած, որը կ'որոշուէր «բաս-
կէ րաստէ, բասկէ ճապէ» առումով. բացի ազգայնական հին
բաժանումներէ, հայերն ալ հետն առած, որ կը կոչուէր Զիլ,
Միլ : Բացի ուրիշ քանի մը ցեղերով միացած ընդհանրական
անուններէ. մենք պիտի յիշատակենք մանր ստորաբաժանում-
ները Հայկական երկիրներու մէջ, ու անոնց սահմաններու
վրայ :

1. «Բասկէ րաստէ, բասկէ ճապէ» աշխարհագրական
բաժանումները, ունի քաղաքական ու տնտեսական ընդլթ .

2. «Զիլ, Միլ ազգայնական բաժանումները, ունի հինկն
մնացած՝ արեան, սևուի, լեզուի ու սովորութիւններու ընդլթ .

3. Քանի մը ցեղերու միացած ընդհանրական անուններն
ունին, կապակցութիւն, միութիւն ստեղծելու ընդլթ .

Անոնց ստորաբաժանումներու գլխաւոր ցեղական անուն-
ներն է որ պիտի նշանակենք այժմ :

Վանի գծի վրայ. Ռուսո-Թիւրք-Պարսկական սահմանա-
գրիտի ամբողջ երկարութեամբ կը գտնուին ընդհանուր անու-
նով Շըկակները. ստորաբաժանումներու կոչումով Շամզկցի,
Կարդարցի, Մուկուռցի, Թակուռցի, Մլանցի, Լէվցի, Շաւցի
և այլն .

Արմէի մէջ. Հայտարանցիք. Ալնաւազի մէջ Սիւկցիք :
Հարաւային կողմերը. Մինչև Տիգրանակերտ ու Հէքեա-
րիի սահմանները, խնչպէս Նօրտուղ ու Շատախ, ընդհանուր
անուան սակ Արտօցիք : ստորաբաժանումներու կոչումով .